# COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
## Իմունային անբավարարություն <u>չունեցող</u> անձանց համար

| Տարիք | Պատվաստանյութ | ԲՈԼՈՐԸ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱՆ ԱՅՍ ԴԵՂԱՉԱՓԵՐԸ Հիմնական Շարք | | | Խթանիչ Դեղաչափ | ՈՐՈՇ ՄԱՐԴԻԿ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ 2-ՐԴ ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓ[1] | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5-11 | Pfizer[2] | 1-ին Դեղաչափ | 3 շաբաթ | 2-րդ Դեղաչափ | Այս պահին թույլատրված չէ | | |
| 12-17 | Pfizer[2] | 1-ին Դեղաչափ | 3-8 շաբաթ[3] | 2-րդ Դեղաչափ | Առնվազն 5 ամիս → Միայն Pfizer | | |
| 18+ | Pfizer | 1-ին Դեղաչափ | 3-8 շաբաթ[3] | 2-րդ Դեղաչափ | Առնվազն 5 ամիս → COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ[4] | Առնվազն 4 ամիս<br>Միայն 50+ տարիքի անձանց համար[1] | Միայն Pfizer կամ Moderna |
| 18+ | Moderna | 1-ին Դեղաչափ | 4-8 շաբաթ[3] | 2-րդ Դեղաչափ | Առնվազն 5 ամիս → COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ[4] | Առնվազն 4 ամիս<br>Միայն 50+ տարիքի անձանց համար[1] | Միայն Pfizer կամ Moderna |
| 18+ | Johnson & Johnson | 1-ին Դեղաչափ | | | Առնվազն 5 ամիս → COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ[4] | Առնվազն 4 ամիս<br>50+ տարիքի և J&J-ի 2 դեղաչափ ստացած 18+ տարիքի անձանց համար[1] | Միայն Pfizer կամ Moderna |

**Եթե դուք վարակված եք COVID-19-ով**, սպասեք մինչև ապաքինվեք (եթե ունեք ախտանիշներ) և ավարտեք մեկուսացումը՝ COVID-19-ի դեմ -պատվաստանյութի դեմ ցանկացած դեղաչափ ստանալու համար: Դուք կարող եք դիտարկել 3 ամսով ձեր խթանիչ դեղաչափ(եր)ի հետաձգումը, եթե վերջերս վարակվել եք:

1. Եթե դուք 50 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի ԿԱՄ 18-49 տարեկան եք և պատվաստվել եք J&J պատվաստանյութով ԻՆՉՊԵՍ ձեր 1-ին դեղաչափը, ԱՅՆՊԵՍ էլ խթանիչ դեղաչափը ստանալիս, կարող եք ձեր ցանկությամբ ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափը: Տե՛ս <u>2-րդ Խթանիչ Դեղաչափի Դիտարկումը</u>:
2. Pfizer պատվաստանյութը COVID-19-ի դեմ միակ պատվաստանյութն է, որը թույլատրված է 18 տարեկանից փոքր անձանց: 5-11 տարեկան երեխաների համար նախատեսված Pfizer պատվաստանյութն ունի նույն ակտիվ բաղադրիչները, ինչ մեծահասակների պատվաստանյութը, սակայն պարունակում է ավելի փոքր չափաբաժին (դեղաչափի 1/3-ը):
3. 2-րդ դեղաչափի ընդունման ժամանակը. 8 շաբաթ ընդմիջումը կարող է լավագույնը լինել 12-64 տարեկան մարդկանցից շատերի համար: 65 տարեկան և ավելի բարձր տարիքի կամ շտապ պաշտպանության կարիք ունեցող անձանց խորհուրդ է տրվում 3 շաբաթ ընդմիջում: Տե՛ս <u>Pfizer կամ Moderna պատվաստանյութերի 2-րդ դեղաչափի ընդունման ժամկետները</u>:
4. Pfizer և Moderna պատվաստանյութերը նախընտրելի են J&J պատվաստանյութից բոլոր դեղաչափերի դեպքում: J&J պատվաստանյութն առաջարկվում է <u>որոշ իրավիճակներում</u>:

COUNTY OF LOS ANGELES Public Health

# COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## Իմունային անբավարարություն[1] ունեցող անձանց համար

| Տարիք | Պատվաստանյութ | ԲՈԼՈՐԸ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱՆ ԱՅՍ ԴԵՂԱՉԱՓԵՐԸ<br>Հիմնական Շարք | Խթանիչ Դեղաչափ | ՈՐՈՇ ՄԱՐԴԻԿ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ 2-ՐԴ ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓ[2] |
|---|---|---|---|---|
| **5-11** | **Pfizer** | 1-ին Դեղաչափ → 3 շաբաթ → 2-րդ Դեղաչափ → Առնվազն 4 շաբաթ → 3-րդ Դեղաչափ | Այս պահին թույլատրված չէ | |
| **12-17** | **Pfizer** | 1-ին Դեղաչափ → 3 շաբաթ → 2-րդ Դեղաչափ → Առնվազն 4 շաբաթ → 3-րդ Դեղաչափ | Առնվազն 3 ամիս → Միայն Pfizer | Առնվազն 4 ամիս → Միայն Pfizer |
| **18+** | **Pfizer** | 1-ին Դեղաչափ → 3 շաբաթ → 2-րդ Դեղաչափ → Առնվազն 4 շաբաթ → 3-րդ Դեղաչափ | Առնվազն 3 ամիս → COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ[3] | Առնվազն 4 ամիս → Միայն Pfizer կամ Moderna |
| **18+** | **Moderna** | 1-ին Դեղաչափ → 4 շաբաթ → 2-րդ Դեղաչափ → Առնվազն 4 շաբաթ → 3-րդ Դեղաչափ | Առնվազն 3 ամիս → COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ[3] | Առնվազն 4 ամիս → Միայն Pfizer կամ Moderna |
| **18+** | **Johnson & Johnson** | 1-ին Դեղաչափ → Առնվազն 4 շաբաթ → 2-րդ Դեղաչափ<br>Միայն Pfizer կամ Moderna | Առնվազն 2 ամիս → COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ[3] | Առնվազն 4 ամիս → Միայն Pfizer կամ Moderna |

**Եթե վարակված եք COVID-19-ով**, սպասեք մինչև ապաքինվեք (եթե ունեք ախտանիշներ) և ավարտեք մեկուսացումը՝ COVID-19-ի դեմ պատվաստանյութի ցանկացած դեղաչափ ստանալու համար:

1. 5 տարեկան և ավելի բարձր տարիքի միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ (օրինակ՝ արյան քաղցկեղ կամ քաղցկեղի բուժում, օրգանների փոխպատվաստում և որոշակի աուտոիմունային հիվանդություններ) ունեցող անձինք պետք է ստանան լրացուցիչ հիմնական դեղաչափ: Եթե 12+ տարեկան են, պետք է ստանան նաև խթանիչ դեղաչափ(եր)ը:
2. 12 տարեկան և ավելի մեծ տարիքի անձինք հնարավորություն ունեն ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափ: Նրանք պետք է դիտարկեն այս դեղաչափը հնարավորինս շուտ ստանալը և իրենց բժշկի հետ խոսեն դեղաչափը ստանալու լավագույն ժամանակի մասին՝ ելնելով իրենց առողջության վտանգներից և բուժման ծրագրից: Տե՛ս 2-րդ Խթանիչ Դեղաչափի Դիտարկում:
3. Pfizer և Moderna պատվաստանյութերը նախընտրելի են J&J պատվաստանյութից բոլոր դեղաչափերի դեպքում: J&J պատվաստանյութն առաջարկվում է որոշ իրավիճակներում:



County of Los Angeles Public Health

# COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**Խթանիչ/լրացուցիչ դեղաչափ(եր) այն մարդկանց համար, որոնք լիովին պատվաստված են[1,2] ԱՄՆ-ից դուրս տրվող պատվաստանյութով, կլինիկական փորձարկումների շրջանակում, կամ պատվաստվել են միախառնում և համադրում տարբերակով**

Մարդիկ, ովքեր համարվում են լիովին պատվաստված COVID-19 -ի դեմ ոչ FDA-ի կողմից հաստատված/թույլատրված պատվաստանյութի հիմնական շարքով, պետք է հետևեն ստորև նշված ժամանակացույցերին՝ COVID-19-ի դեմ պատվաստանյութի խթանիչ/լրացուցիչ դեղաչափերի համար:

| Տարիք | Պատվաստանյութ | ԲՈԼՈՐԸ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱՆ ԱՅՍ ԴԵՂԱՉԱՓԵՐԸ<br>Հիմնական Շարք | | | | | Խթանիչ Դեղաչափ | | ՈՐՈՇ ՄԱՐԴԻԿ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ 2-ՐԴ ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓ[3] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **12+** | **Ոչ FDA-ի կողմից թույլատրված/հաստատված պատվաստանյութ** | 1-ին Դեղաչափ | Խորհուրդ Տրվող Ընդմիջումը | 2-րդ Դեղաչափ | | Առնվազն 5 ամիս | Pfizer կամ Moderna[4] (12-17՝ միայն Pfizer) | Առնվազն 4 ամիս | Pfizer կամ Moderna[4] Միայն 50+ տարիքի անձանց համար[3] |
| **12+ թուլացած իմունային համակարգ ունեցող** | **Ոչ FDA-ի կողմից թույլատրված/հաստատված պատվաստանյութ** | 1-ին Դեղաչափ | Խորհուրդ Տրվող Ընդմիջումը | 2-րդ Դեղաչափ | Առնվազն 4 շաբաթ | 3-րդ Դեղաչափ Pfizer կամ Moderna[4] (12-17՝ միայն Pfizer) | Առնվազն 3 ամիս → Pfizer կամ Moderna[4] (12-17՝ միայն Pfizer) | Առնվազն 4 ամիս | Pfizer կամ Moderna[3,4] (12-17՝ միայն Pfizer) |

**Եթե դուք վերջերս վարակվել եք COVID-19-ով, կարող եք դիտարկել 3 ամսով ձեր խթանիչ դեղաչափ(եր)ի հետաձգումը:**

1. Դուք համարվում եք լիովին պատվաստված, եթե անցել է 2 շաբաթ՝
   - Այն պատվաստանյութերի շարքի վերջնական դեղաչափը ստանալուց, որը նշված է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) արտակարգ իրավիճակներում օգտագործման ցանկում: Ներկայումս ցանկը ներառում է AstraZeneca-Oxford (Vaxzevria), Հնդկաստանի Շիճուկային Ինստիտուտ Մասնավոր ՍՊԸ (Covishield և Covovax), BIBP (Sinopharm), Sinovac (CoronaVac), Bharat Biotech International (Covaxin) և Novavax (Nuvaxovid) պատվաստանյութերը: Տե՛ս COVID-19-ի Համար ԱՀԿ-ի Արտակարգ Իրավիճակներում Օգտագործման ներկայիս ցանկը:
   - FDA-ի կողմից հաստատված/թույլատրված և/կամ ԱՀԿ-ի ցանկում նշված պատվաստանյութերի «միախառնում և համադրում» (mix and match) համակցության վերջնական դեղաչափը ստանալուց (միայն այն դեպքում, եթե առաջին 2 դեղաչափերը տրվել են առնվազն 17 օր ընդմիջումով):
   - Պատվաստանյութերի կլինիկական փորձարկումներում ընդգրկված COVID-19-ի դեմ առաջարկվող բոլոր «ակտիվ» պատվաստանյութերը (ոչ պլացեբո) ստանալուց: Ծանոթություն. պատվաստանյութը պետք է լինի ԱՀԿ-ի ցանկում նշված պատվաստանյութ, որը հաստատված/թույլատրված չէ FDA-ի կողմից, կամ պատվաստանյութ, որի արդյունավետությունը անկախորեն հաստատվել է ԱՄՆ տվյալների և անվտանգության վերահսկողության խորհրդի կամ համարժեք մարմնի կողմից:
2. Եթե դուք չեք բավարարում լիովին պատվաստման չափանիշները, այցելեք CDC-ի պատվաստումը ԱՄՆ-ից դուրս/ կլինիկական փորձարկումների շրջանակում փաստաթղթի A և B Հավելվածները:
3. Դուք կարող եք ձեր ցանկությամբ ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափը (միայն Pfizer կամ Moderna պատվաստանյութ), եթե դուք 50 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի; ԿԱՄ եթե ունեք միջին կամ խիստ իմունային անբավարարություն (թույլ իմունային համակարգ): Եթե դուք 12-17 տարեկան եք, կարող եք պատվաստվել միայն Pfizer պատվաստանյութով: Տե՛ս 2-րդ Խթանիչ Դեղաչափի Դիտարկում:
4. COVID-19-ի դեմ Pfizer և Moderna պատվաստանյութերը միակ պատվաստանյութերն են, որոնք թույլատրված են որպես լրացուցիչ կամ խթանիչ դեղաչափեր այն մարդկանց համար, որոնք չեն ստացել COVID-19 -ի դեմ FDA-ի կողմից թույլատրված/հաստատված պատվաստանյութերի հիմնական շարքը: 12-17 տարեկան երեխաները կարող են պատվաստվել միայն Pfizer պատվաստանյութով:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Պատվաստվելուց Հետո կայքէջի *Ե՞րբ է COVID-19-ի դեմ իմ պատվաստման կարգավիճակը արդիական* բաժինը: